



ԵՐԵՎԱՆԻ ՄԻԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Հասարակել է

ԵՊԲՀ Գիտական խորհրդի

26.06.2019 թվականի

թիվ 10 որոշմամբ

Ռեկտոր Ա.Ա.Մուրադյան

Ընդհանուր դրույթներ

1. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) «Առարկայական ուսումնամեթոդական հանձնաժողովի կանոնակարգով» սահմանվում է Համալսարանի առարկայական ուսումնամեթոդական հանձնաժողովի կարգավիճակը, իրավասությունները, աշխատակարգը և որոշումներ ընդունելու շրջանակները:

2. Սույն կանոնակարգի իրավական հիմքերն են «Կրթության մասին» ՀՀ օրենքը, «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքը, Համալսարանի կանոնադրությունը, սույն կանոնակարգը և այլ իրավական ակտեր:

3. Սույն կանոնակարգն ընդունվում և դրանում փոփոխությունները կատարվում են Համալսարանի Գիտական խորհրդի կողմից:

Հանձնաժողովի կարգավիճակը

4. Համալսարանի առարկայական ուսումնամեթոդական հանձնաժողովը Համալսարանի ուսումնամեթոդական հարցերի մարմին է:

5. Համալսարանի առարկայական ուսումնամեթոդական հանձնաժողովները ստեղծվում են ըստ մասնագիտական ուղղվածության և (կամ) մասնագիտությունների խմբերի:

6. Սույն կանոնակարգով սահմանված լիազորությունների սահմաններում առարկայական ուսումնամեթոդական հանձնաժողովն իրավունք ունի ընդունելու որոշումներ:

7. Առարկայական ուսումնամեթոդական հանձնաժողովի ընդունված որոշումները ենթակա է կատարման հանձնաժողովի մասնագիտական ուղղվածության և (կամ) մասնագիտությունների խմբերի ամբիոնների կողմից:

Հանձնաժողովի կազմը

8. Առարկայական ուսումնամեթոդական հանձնաժողովը կազմավորվում է սույն կանոնակարգով սահմանված Համալսարանի ի պաշտոնե անդամներից՝

ա) առարկայական ուսումնամեթոդական հանձնաժողովի մասնագիտական ուղղվածության և (կամ) մասնագիտությունների խմբերի ամբիոնների վարիչները.

բ) ուսանողական խորհրդարանի ներկայացուցիչները:

9. Առարկայական ուսումնամեթոդական հանձնաժողովի կազմում կարող են ընդգրկվել նաև Համալսարանի ուսումնամեթոդական խորհրդի նախագահի կողմից առաջադրված առաջատար մասնագետներ և Համալսարանի այլ աշխատողներ:

10. Առարկայական ուսումնամեթոդական հանձնաժողովն իր կազմից ընտրում է նախագահ՝ անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ, բաց քվեարկությամբ, եթե փակ գաղտնի քվեարկություն անցկացնելու որոշում Հանձնաժողովը չի կայացրել:

11. Առարկայական ուսումնամեթոդական հանձնաժողովի ընտրված նախագահի, նախագահի կողմից առաջադրված հանձնաժողովի անդամների և սույն

կանոնակարգով նախատեսված ի պաշտոնե անդամների թեկնածությունները հաստատվում է ռեկտորի հրամանով:

12. Առարկայական ուսումնամեթոդական հանձնաժողովն իր անդամներից ընտրում է քարտուղար՝ բաց քվեարկությամբ:

Հանձնաժողովի իրավասությունները

13. Առարկայական ուսումնամեթոդական հանձնաժողովի նպատակն է սույն կանոնակարգով տրված լիազորությունների շրջանակներում ապահովել Համալսարանի ամբիոնների ուսումնամեթոդական գործունեության արդյունավետությունը:

14. Առարկայական ուսումնամեթոդական հանձնաժողովն իր որոշմամբ Համալսարանի ուսումնամեթոդական խորհրդի քննարկմանը և հաստատմանն է ներկայացնում՝

ա) տվյալ հանձնաժողովի ուղղվածության մասնագիտությունները դասավանդող ամբիոնների առարկայական ծրագրերը, դրանցում անհրաժեշտ փոփոխությունների հիմքում դնելով կրթական ծրագրերի վերջնարդյունքները և որակի ազգային շրջանակի պահանջները.

բ) ուսումնական գործընթացն ապահովող մեթոդական հարցերը.

գ) այլ բուհերի առարկայական ծրագրերի համադրումը.

դ) դասավանդման նոր եղանակներն ու մեթոդները.

ե) գիտելիքների գնահատման նոր ձևաչափերը.

զ) առարկայական ծրագրերի հորիզոնական և ուղղահայաց ինտեգրացիան.

է) ուսումնական նոր գրականության համապատասխանությունն առաջադրված պահանջներին.

ը) նոր մասնագիտական կրթական ծրագրերի և (կամ) առարկաների ուսումնական պլանները և ծրագրերը:

15. Առարկայական ուսումնամեթոդական հանձնաժողովն իրավասու է քննարկվող հարցերի վերաբերյալ կատարել հետազոտություններ:

Հանձնաժողովի աշխատակարգը

16. Առարկայական ուսումնամեթոդական հանձնաժողովի նիստերը հրավիրվում են առնվազն ամիսը մեկ անգամ և (կամ) ըստ անհրաժեշտության:

17. Առարկայական ուսումնամեթոդական հանձնաժողովի օրակարգը սահմանվում է հանձնաժողովի որոշմամբ:

18. Առարկայական ուսումնամեթոդական հանձնաժողովի տարեկան աշխատանքային պլանը յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին քննարկվում է հանձնաժողովում և ներկայացվում Համալսարանի ուսումնամեթոդական խորհրդի նախագահին:

19. Տարեկան աշխատանքային պլանի կատարողականը Համալսարանի ուսումնամեթոդական խորհրդի նիստին ներկայացնում է Առարկայական ուսումնամեթոդական հանձնաժողովի նախագահը՝ ընթացիկ տարվա մայիսից հունիս ամիսների ժամանակահատվածում:

20. Առարկայական ուսումնամեթոդական հանձնաժողովի նիստերը վարում է հանձնաժողովի նախագահը:

21. Առարկայական ուսումնամեթոդական հանձնաժողովի նիստերն իրավասու են, եթե նիստին մասնակցում է հանձնաժողովի անդամների երկու երրորդը:

22. Առարկայական ուսումնամեթոդական հանձնաժողովում քննարկվող հարցերի վերաբերյալ որոշումներն ընդունվում են հանձնաժողովին մասնակցող անդամների ձայնի պարզ մեծամասնությամբ:

Ձայների հավասար լինելու դեպքում Առարկայական ուսումնամեթոդական հանձնաժողովի նախագահի ձայնը որոշիչ է:

23. Առարկայական ուսումնամեթոդական հանձնաժողովի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել հանձնաժողովի նախագահի կողմից հրավիրված անձինք:

24. Առարկայական ուսումնամեթոդական հանձնաժողովի քարտուղարը՝

ա) նախապատրաստում է հանձնաժողովի կողմից քննարկվող հարցերի վերաբերյալ որոշումների նախագծեր.

բ) կազմակերպում է հանձնաժողովի նիստի նախապատրաստական աշխատանքները.

գ) սղագրում է հանձնաժողովի նիստերը և կազմում արձանագրություններ.

դ) հանձնաժողովի որոշման օրինակներն ուղարկում է ըստ նշանակության և շահագրգիռ անձանց.

ե) վարում է հանձնաժողովի որոշումների գրանցամատյանը.

զ) վարում է հանձնաժողովի գործունեության գործավարությունը:

25. Առարկայական ուսումնամեթոդական հանձնաժողովի արձանագրության մեջ նշվում են նիստի անցկացման ամսաթիվը, հերթական համարը, ներկա անձանց մասին տեղեկություններ, օրակարգը և ընդունված որոշումները:

* * *